SOUTH CAUCASUS, THE ARENA FOR CHINESE POLITICS: THE CURRENT SITUATION AND PROSPECTS

Lianna Ananyan
Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

The research is devoted to the political interests of the People's Republic of China in the Caucasus. Especially the subject of research is the interpretation of the political and economic methodology of the PRC, clarification of the name of this Caucasian region. Comparisons were made between the methodologies of presence of the United States, Russia and the People's Republic of China in this region. This article focuses on the formation, development of Confucius institutions in the region. The main goals, advantages, resources, sources of financing and target groups for the implementation of Chinese "soft power" were presented. The article also briefly touches thems about "One belt One Road" and the Confucius Peace Prize.

Keywords: South Caucasus, Transcaucasia, China, soft power, Confucius, Confucius institute, chinese

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Փիրուզա Սարգսյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Ժամանակակից հասարակություններում քաղաքացիական հասարակության անհրաժեշտությունը դիտվում է որպես իրավական և ժողովրդավարական պետության կայացման և դրա կենսունակ գործառնության կարևորագույն ինստիտուտներից մեկը: Ի՞նչու է այդքան կարևոր քաղաքացիական հասարակությունը: Արդյո՞ք իշխանությունների տարանջատման և փոխզսպման մեխանիզը բավարար չէ դեմոկրատական հասարակության ձևավորման և իշխանության հավասարակշռման համար: Պարզվում է՝ ոչ՞: Դա բավարար է իշխանության ներքին հավասարակշռման համար, սակայն

հասարակության և պետության ներդաշնակ փոխգարծակցության համար անհրաժեշտ է նաև կազմակերպված քաղաքացիական հասարակություն:

Եվ ուրեմն, ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը:

Հարցի պատասխանը տրվել է բազմաթիվ գիտնականների բազում աշխատություններում, սակայն դեռևս կան բազմաթիվ հարցեր, որոնք դեռ պետք է պարբերաբար ուսումնասիրել, քանի որ քաղաքացիական հասարակությունը կաղապարային երևույթ չէ. այն անընհատ զարգացող ինստիտուտ է, այդ իսկ պատճառով հասարակական գիտությունների, մասնավորապես քաղաքագիտությանը, պետք է ուշադրության կենտրոնում պահեն այն՝ հասկանալու համար դրա զանգացման միտումները: Ինչպես ժողովրդավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության գաղափարը դոգմա չէ: Այն փոփոխությունների է ենթարկվել համաշխարհային մտքի պատմության և պրակտիկայի ընթացքում՝ զարգանալով, շտկվելով և խմբա-գրվելով:

Քաղաքացիական հասարակության վերաբերյալ պատկերացումների զարգացման նորագույն շրջանում էական ազդեցություն ունեցան հանրային կառավարման գործընթացներում ապակենտրոնացվածության և ինքնավարության սկզբունքների կարևորության վերաբերյալ Ալ. դե Թոքվիլի և Գ. Հեգելի գաղափարները: 20-րդ դարում հետզհետե ավելի ու ավելի սկսեց կարևորվել ոչ պետական (ոչ քաղաքական), ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպությունների՝ «երրորդ սեկտորի» դերակատարությունը հանրային կյանքում: Ներկայումս այդ կազմակերպություններն էական դերակատարություն ունեն քաղաքացիների շահերի ինտեգրման, խմբավորման (ագրեգացման), ձևակերպման (արտիկուլացման) և կուսակցությունների ու պետական հաստատությունների հետ հարաբերություններում ներկայացման գործում:

Քաղաքացիական հասարակության ձևավորման համար առանցքային նշանակություն ունի քաղաքացիների իրավագիտակցությունը, քաղաքական գիտակցությունը, քաղաքացիական բարձր վարքագիծը քաղաքացիական մշակույթի ձևավորման, մարդու իրավունքների և ազատությունների առավել ամբողջական ապա-հովման գործում: Դեռ Լոքը պնդում էր, որ իշխանությունը երկրում պատկանում է ժողովրդին, իսկ հասարակությունը կազմված է այդ նույն ժողովրդից: Սակայն քաղաքական իշխանությունը կարող է հավատարիմ չմնալ

հասարակական դաշինքին, հակվել բացարձակ բռնատիրական իշխանության, որը կհակադրվի քաղաքացիական հասարակությանը և կոտնահարի մարդկանց իրավունքներն ու ազատությունները: Այդ նպատակով՝ Լոքը առաջարկում էր առանձնացնել պետական իշխանության ճյուղերը՝ պահպանելով դրանց իքնուրույնությունը, պահպանել ժողովրդի իրավունքը[1]: Քաղաքացիական հասարակության գոյությունը հիմնվում է որոշակի ռացիոնալ նորմերի վրա, որոնց պահպանման և իրականացման համար ստեղծվում են հատուկ կազմակերպություններ ու կառույցներ, որոնք բնորոշ չեն ավանդական հասարակությանը: Այն բարդ կառուցվածք ունեցող բազմական (պլյուրալիստական) համակարգ է, որն ունակ է ինքնազարգացման ու ինքնակարգավորման:

Հիմնախնդիրը արդիական է և հատկապես մեծ կարևորություն ունի մերօրյա հասարակությունում: Քանի որ քաղաքացիական հասարակության գոյության անհրաժեշտությունը ժողովրդավարական վարչակարգ հաստատելու գործում ժողովրդավարության կարևոր տարրերից մեկն է. պետության կառավարման գործընթացում քաղաքացիների ակտիվ մասնակցության ապահովումը հնարավոր է միայն քաղաքացիական հասարակության առկայության դեպքում:

Չնայած այն բանին, որ քաղաքացիական հասարակությունը առանձնանում է պետական ինստիտուտից, այն սահմանվում է որպես «մեր կյանքի մյուս մասի հետ միասին, որի պահպանման համար պետությունը ջանքեր չի գործադրում, քանի որ այն ստեղծվում է հասարակության նախաձեռնությամբ»՝ հենվելով շուկայի և հանրության վրա[2]: Ինչ վերաբերում է ժողովրդի ինքնակազմակերպման գործընթացին, ապա դա սկզբունքորեն կենտրոնացած է ազատ մարդկանց համայնքի ձևավորման և զարգացման վրա, որը կապված է փոխադարձ համակրանքի և բարեկամության զգացողության հետ, որն ուժեղ է արյունակցական և տարածքային կապերից[3]: Սա հատկապես կարևոր է մեր պարագայում, քանի որ հայ հասարակությունում դեռևս ամուր են արյունակցական (նեպոտիստական) կապերը: Քաղաքացիականության մշակույթի և դրա հիմքի վրա քաղաքացիա-կան

---

[1] **Локк Д.** Избранные философские произведения в двух томах, т. 2, М., 1960. С. 116:

[2] **Дарендорф Р.** После 1989. Мораль, революция и гражданское общество. М., 1998. С. 89.

[3] **Ильин М. В.** Слова и смыслы. Опыт написания ключевых политических понятий. М., 1997. С.160-169.

հասարակության ձևավորումը այն հիմքն է, որը կհաղթահարի արյունակցականության երևույթը պետության կազմակերպման գործում:

Իբրև երևույթ՝ հասարակությունը շատ բարդ է ու բազմաբնույթ: Ժամանակակից գրականության մեջ գրեթե բոլոր հեղինակները միասնական են այն հարցում, որ քաղաքացիական հասարակությունն ազատ անհատների միություն է, որտեղ յուրաքանչյուր ոք ազատ է ընտրելու սեփականության այս կամ այն ձևը, ընտրելու իր աշխատանքն ու տնօրինելու իր վաստակը: Քաղաքացիական հասարակությունը պետությունից անկախ, սակայն պետության հետ համագործակցող հասարակություն է, որի անդամների միջև հաստատվել են տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական զարգացած հարաբերություններ: Միասնական կարծիք կա նաև այն հարցում, թե քաղաքացիական հասարակությունը բաց հասարակություն է, որտեղ ապահովվում են խոսքի, խղճի ու դավանանքի ազատությունները, տեղեկատվության բոլոր ձևերից օգտվելու ազատությունը, գիտատեխնիկական ու մշակութային գործունեության ազատությունը և այլն: Քաղաքացիական հասարակությունն այլընտրանքային է, ունի իր որոշակի կառուցվածքը, բազմաթիվ հասարակական ու հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու միությունները, որոնք կոչված են բավարարելու մարդկանց բազմակողմանի պահանջներն ու նախասիրությունները: Քաղաքացիական հասարակությունն ինքնակառավարվող համակարգ է: Դա ազատ քաղաքացիների ժողովրդավարական հասարակություն է և անհամատեղելի է ամբողջատիրական, բռնապետական կարգերի ու վարչակարգերի հետ:

Հատկանշական է, որ եթե հասարակության մեջ չկա ազատություն կամ այն ճիշտ չի գնահատվում, ապա քաղաքացիական հասարակության ձևավորման համար պայմաններ չկան: Քաղաքացիական հասարակության առաջացմանը նպաստեց նաև արդյունաբերական հասարակության հատուկ մշակույթը՝ կենտրոնանալով վերարտադրողական գործունեության վրա: Այս մշակույթի շրջանակներում անհատը հնարավորություն է ստանում ոչ միայն մասնագիտություն ընտրել, այլև սովորել տեսական և գործնական մակարդակով: Նա կարողացավ փոխել իր արժեքային կողմնորոշումները, ձեռք բերել նոր սոցիալական կարգավիճակ և պատկանել նոր սոցիալական խմբի՝

հայտարարելով իրեն, որ նա ստրուկ չէ, այլ իր կամքի տերը: Քաղաքացիական հասարակության անընդհատական զարգացումը պետք է միտված լինի պետական կառավարման մարմինների հետ համագործակցության խորացմանն ու ինստիտուցիոնալացմանը, հանրային բնույթի որոշ լիազորությունների պատվիրակման հասարակական հատվածին, ինչպես նաև՝ ոլորտի կարգավորման վերաբերյալ նոր առաջարկությունների քննարկման գործում վերջիններիս առավելագույն ներգրավմանը: Քաղաքացիական հասարակությունը կարող է գոյություն ունենալ միայն իրավական պետության առկայության պայմաններում: Դրանք կարծես պայմանավորում են մեկը մյուսին: Շատ կարևոր է պետության վարած քաղաքականությունը և կառավարումը քաղաքացիական հասարակության ստեղծման և կայացման գործում:

Կառավարությունն, ըստ էության կապված է քաղաքականության հետ, քանի որ այդ քաղաքակությունը հաճախ սահմանվում է որպես կառավարման արվեստ, բայց վերջինս ավելի լայն և ընդգրկուն է քան կառավումը: Քաղաքացիական հասարակության զարգացումը ենթադրում է իդեալական հարաբերություններ քաղաքացիների և կառավարության միջև, մարդու իրավուքների և արժանապատվության նկատմամբ հարգանք, երկրի հարստության հավասար բաշխում, անհատի հնարավորությունների զարգացում, ստեղծագործական միջավայրի ստեղծում և մարդկանց մասնակցության խթանում ստեղծարար աշխատանքի, որը կնպաստի նաև աղքատության շեմի և գործազրկության նվազմանն ու տնտեսական բարգավաճմանը:

Քաղաքացիական հասարակությունն առաջացավ և զարգացում ապրեց նաև ՀՀ-ում, քանի որ պետությունն այլևս ի վիճակի չէր լրիվ ծավալով բարելավել սոցիալական հարաբերությունները կարգավորող գործառույթները: Քաղաքացիական փոխզիջման և գաղափարական բազմակարծության նախադրյալները հասունացել էին, գոյություն ունեին մի շարք հասարակական ինստիտուտներ, որոնք իրենց կարգավիճակով կարող էին հավասար երկխոսություն ունենալ պետության ինստիտուտի հետ, կարող էին դիմակայել պետության քաղաքական ընդլայնմանը՝ նրա հակահամաճարակային լինելուն, ձեռնպահ մնալ մենաշնորհի ձգտումից, հասարակության զարգացումն ապահովելու համակարգից, ինքնաբավության համակարգում, որտեղ իշխանության հեղինակությունը էականորեն խմբագրվում էր քաղաքա-

ցիական հասարակության կողմից: Այդ ժամանակ պահանջ առաջացավ իստիտուցոնալացնելու քաղաքացիական հասարկությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են քաղաքացիական հասարակության մասին որոշ հիմնական հայեցակարգեր: Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում այս երևույթը ստացել է նոր կերպափոխումներ և գտնվում է դինակի զարգացման մեջ: Պետության և կառավարման համակարգերի կատարելագործմանը զուգահեռ, կատարելագործվում և ինստիտուցիոնալ նոր փուլ է անցնում քաղաքացիական հասարակությունը: Դա պարտադրում է սոցիոլոգիական գիտությանը, քաղաքագիտությունը, իրավագիտութ-յան, հոգեբանությանը անընդհատ ուշադրության կենտրոնում պահել այս երևույթը:

Բանալի բառեր. քաղաքացիական հասարակություն, իրավական պետությունը, նեպոտիզմ, քաղաքացիական մշակույթ:

О ВОПРОСЕ ТЕОРЕТИЧЕСКИХ ОСНОВ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА

Пирюза Саркисян

Аспирант Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье рассматриваются некоторые из основных концепций гражданского общества. Очевидно, что в современном мире это явление претерпело новые преобразования и находится в динамичном развитии. Наряду с совершенствованием системы государства и управления гражданское общество переживает новый и усовершенствованный институциональный этап. Это обязывает социологию, политологию, юриспруденцию, психологию держать это явление в фокусе.

Ключевые слова: гражданское общество, правовое государство, непотизм, гражданская культура.

REFERRING TO THEORETICAL BASICS OF CIVIL SOCIETY

Piruza Sargsyan
Postgraduate Student of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article discusses some of the basic concepts of civil society. Obviously, in the modern world this phenomenon has undergone new transformations and is in dynamic development. Along with the improvement of the state system and governance, civil society is undergoing a new and improved institutional stage. This obliges sociology, political science, jurisprudence, psychology to keep this phenomenon in focus.

Keywords: civil society, rule of law, nepotism, civic culture**.**